«Այբ» կրթական հիմնադրամ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2013թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

AMH AUDIT
HLB Member of International

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0023,
Արշակունյաց պող. 2,
գրասենյակ 315

Հեռախոս՝ +(374 60) 62 32 51
Բջջային՝ +(374 91) 88 30 10
Էլ.փոստ՝ amhaudit@amhaudit.am
Կայք՝ www.amhaudit.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ» կրթական հիմնադրամի հիմնադիրներին

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Կազմակերպություն») և նրա դուստր կազմակերպության (այսուհետ՝ միասին «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2013թ., հաշվետու տարվա համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար տեղին ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդնում և կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառություն, ինչպես նաև ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Բացառությամբ «Վերապահումով կարծիք արտահայտելու համար հիմքեր» պարագրաֆից մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի համապատասխան պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Վերապահումով կարծիք արտահայտելու համար հիմքեր

Կազմակերպության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 8,386 հազար դրամ (2012թ.՝ 20,889 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով պաշարների ֆիզիկապես գույքագրումը հնարավոր չեղավ իրականացնել դրանց նույնականացման անհնարինության պատճառով: Այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով հնարավոր չեղավ բավարար աուդիտորական ապացույցներ ձեռք բերել 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների ֆիզիկապես առկա քանակության վերաբերյալ: Համապատասխանաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

պաշարների, հիմնական միջոցների, ակտիվներին վերաբերող շնորհների, եկամուտներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքների, և 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա օգտագործված հումք և նյութերի ծախսի, եկամուտներին վերաբերող շնորհներից ճանաչված եկամտի, ակտիվներին վերաբերող շնորհներից ճանաչված եկամտի, հարկերի և տարվա արդյունքի համար:

Կազմակերպության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների մնացորդում ներառված՝ 25,040 հազար դրամ (2012թ.՝ 17,414 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով համակարգչային տեխնիկայի, 71,810 հազար դրամ հաշվեկշռային արժեքով տնտեսական գույքում ներառված 4,650 հազար դրամ (2012թ.՝ 461 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով խոհանոցային սպասքի և 3,023 հազար դրամ (2012թ.՝ 1,614 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով գրքերի ֆիզիկապես գույքագրումը հնարավոր չեղավ իրականացնել դրանց նույնականացման անհնարինության պատճառով: Այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով հնարավոր չեղավ բավարար աուդիտորական ապացույցներ ձեռք բերել 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված հիմնական միջոցների ֆիզիկապես առկա քանակության վերաբերյալ: Համապատասխանաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված հիմնական միջոցների և ակտիվներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքների, և 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության ծախսի, ակտիվներին վերաբերող շնորհներից ճանաչված եկամտի, հարկերի և տարվա արդյունքի համար:

Կազմակերպությունը պատշաճ հաշվապահական գրանցումներ չի պահպանել անավարտ ոչ ընթացիկ ակտիվներում ներառված ծախսումների որոշ մասի սկզբնական արժեքի վերաբերյալ: Այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով հնարավոր չեղավ բավարար աուդիտորական ապացույցներ ձեռք բերել 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության անավարտ ոչ ընթացիկ ակտիվներում ներառված 52,110 հազար դրամ (2012թ.՝ 39,581 հազար դրամ, 1 հունվարի 2012թ.՝ 9,503 հազար դրամ) ծախսումների սկզբնական արժեքի վերաբերյալ: Համապատասխանաբար, մենք չկարողացանք որոշել, թե արդյոք անհրաժեշտ կլինեին ճշգրտումներ 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ ոչ ընթացիկ ակտիվների, ակտիվներին վերաբերող շնորհների, եկամուտներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքի, և 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա օգտագործված հումք և նյութերի ծախսի, հարկերի և տարվա արդյունքի համար:

Վերապահումով կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ այն ուղղումների ազդեցությունից, եթե կլինեին այդպիսիք, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե մենք կարողանայինք ձեռք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույց «Վերապահումով կարծիք արտահայտելու համար հիմքեր» բաժնում նկարագրվածների վերաբերյալ, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2013թ., ինչպես նաև նրա համախմբված գործունեության արդյունքները ու համախմբված դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Արամ Հովհաննիսյան
Գլխավոր տնօրեն

Լիլիթ Հովհաննիսյան
Աուդիտոր

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ
12 հունվարի 2015թ.

հազ. դրամ		2013թ.	2012թ. վերանայված	1 հունվարի 2012թ. վերանայված
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	11	226,823	162,661	57,967
Ոչ նյութական ակտիվներ	12	51,396	46,218	33,105
Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ	13	1,269,971	1,117,027	556,316
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	14	80,439	52,351	10,884
Հետաձգված հարկային ակտիվներ	19	6,549	2,845	1,543
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,635,178**	**1,381,102**	**659,815**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	15	9,731	23,812	12,089
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	9,072	16,162	15,271
Տրված կանխավճարներ		16,953	13,766	8,975
Տրված փոխառություններ	17	23,945	-	2,699
Տրված կանխավճարներ շահութահարկի գծով		-	197	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	77,748	24,322	84,212
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**137,449**	**78,259**	**123,246**
Ընդամենը ակտիվներ		**1,772,627**	**1,459,361**	**783,061**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Սեփական կապիտալ				
Չբաշխված շահույթ		26,446	-	-
Ընդամենը սեփական կապիտալ		**26,446**	**-**	**-**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	20	1,424,407	1,126,157	536,529
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,424,407**	**1,126,157**	**536,529**
Ընթացիկ պարտավորություններ				
Եկամուտներին վերաբերող շնորհներ	21	80,366	83,796	92,732
Վարկեր և փոխառություններ	22	67,001	110,885	99,865
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	169,314	138,523	53,750
Շահութահարկի գծով պարտավորություն		5,093	-	185
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**321,774**	**333,204**	**246,532**
Ընդամենը պարտավորություններ		**1,746,181**	**1,459,361**	**783,061**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**1,772,627**	**1,459,361**	**783,061**

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 35-ը էջերում համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ		2013թ.	2012թ. վերաներկայացված
Հասույթ	5	297,275	142,068
Այլ եկամուտ	6	372,369	389,017
		669,644	**531,085**
Օգտագործված հումք և նյութեր		(48,133)	(22,448)
Աշխատակազմի գծով ծախսեր	7	(378,831)	(281,145)
Մաշվածություն և ամորտիզացիա		(37,373)	(20,455)
Այլ ծախսեր	8	(173,669)	(203,175)
Ֆինանսական ծախսեր	9	(5,059)	(5,953)
Ֆինանսական եկամուտ	9	1,452	789
Գործունեության արդյունք մինչև շահութահարկով հարկումը		**28,031**	**(1,302)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	(1,585)	1,302
Տարվա արդյունք		**26,446**	**-**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ տարվա համար		**26,446**	**-**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2015 թվականի հունվարի 12-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Դավիթ Սահակյան
Գործադիր տնօրեն

Գրիգոր Գաբրիելյան
Գլխավոր հաշվապահ

Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 35-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Չբաշխված շահույթ/ (Չծածկված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. վերաներկայացված	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա շահույթ	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ., վերաներկայացված	-	-
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ., վերաներկայացված	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա շահույթ	26,446	**26,446**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	26,446	**26,446**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	**26,446**	**26,446**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 35-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Շնորհի ստացված դրամական միջոցներ	640,211	869,920
Գործառնական գործունեությունից դրամական մուտքեր	169,888	123,483
Ստացված կանխավճարներ ծառայությունների գծով	199,169	130,660
Այլ մուտքեր	5,402	2,088
Պաշարների ձեռք բերում	(82,752)	(119,819)
Ծառայությունների ձեռք բերում	(196,333)	(90,442)
Տրված նվիրատվություններ	(1,475)	(14,677)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(276,446)	(222,762)
Վճարված շահութահարկ	-	-
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	(96,693)	(74,218)
Այլ ելքեր	(9,554)	(22,108)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	**351,417**	**582,125**
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական միջոցների, ոչ նյութական և ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(226,609)	(693,230)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**(226,609)**	**(693,230)**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Վարկեր և փոխառություններ, զուտ (մարում)/ստացում	(72,310)	51,229
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**(72,310)**	**51,229**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**52,498**	**(59,876)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	24,322	84,212
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	928	(14)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծնթգ. 18)	**77,748**	**24,322**

Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 35-ը էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Նախապատմություն

(ա) Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել ու կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող կազմակերպությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում դիտվող անորոշությունները ու դրանց ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա ավելի են բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Խումբը և հիմնական գործունեությունը

«Այբ» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Կազմակերպություն) և նրա դուստր կազմակերպությունը՝ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը (այսուհետ՝ միասին «Խումբ»), քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը համախմբում է այն մարդկանց հնարավորությունները, ովքեր գիտակցում են յուրաքանչյուրի կյանքում կրթության կարևորությունը և կամենում են ստեղծել որակյալ ու բազմակողմանի կրթական միջավայր:

Կազմակերպությունը ստեղծվել է 2006թ. դեկտեմբերի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Կազմակերպության հիմնական նպատակն է՝ Հայաստանում բարձրորակ, բազմաբևեռ, օրինակելի կրթական միջավայր ստեղծելը, Հայաստանի կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը նպաստելը, դպրոցականներին և երիտասարդներին ուսման հարցում և իրենց կարիերայի զարգացման գործում աջակցելը, կրթական ոլորտի կազմակերպությունների աշխատակիցների օժանդակումը և նրանց շահերի պաշտպանումը:

Կազմակերպության հիմնադիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ Աշոտ Ասլանյանը,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ Դավիթ Փախչանյանը,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ Արամ Փախչանյանը,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ Կարո Սարգսյանը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ Կարեն Մուսաելյանը,
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ Դավիթ Յանը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ Մաթևոս Արամյանը,
- Հայաստանի Հանրապետությունում գրանցված «Օկտագոն» ՍՊԸ:

Կազմակերպության հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է վեց անդամից՝

- Խորհրդի նախագահ՝ Մաթևոս Արամյան,
- Խորհրդի անդամ՝ Արամ Փախչանյան,
- Խորհրդի անդամ՝ Դավիթ Յան,
- Խորհրդի անդամ՝ Կարեն Մուսաելյան,
- Խորհրդի անդամ՝ Կարո Սարգսյան,
- Խորհրդի անդամ՝ Լևոն Կազարյան:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

Կազմակերպության իրավաբանական և գործունեության իրականացման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա:

2013 թվականի ընթացքում Խմբի աշխատողների միջին քանակը կազմել է 145 աշխատող (2012թ.՝ 102 աշխատող):

2 Պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Խմբի ֆունկցիոնալ արժույթը և սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 16 – Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ
- Ծանոթագրություն 19 – Հետաձգված հարկային ակտիվներ

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է էական ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 5 – Հասույթի ճանաչում
- Ծանոթագրություն 11 – Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ
- Ծանոթագրություն 13 – Անավարտ ոչ ընթացիկ ակտիվների գծով կապիտալ ծախսումներ
- Ծանոթագրություն 25 – Պայմանական դեպքեր

(ե) Նախորդ ժամանակաշրջանի սխալի ուղղում

2013թ.-ի համար ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու ընթացքում Կազմակերպությունը հայտնաբերել է 2012, 2011 և 2010 թվականներին վերաբերող մի շարք սխալներ: Սխալների ուղղման նպատակով ֆինանսական հաշվետվությունների համեմատական տվյալները վերահաշվարկվել և վերաներկայացվել են հետևյալ կերպ՝

Ա. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ, անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ, պաշարներ

2010-2012 թվականների ընթացքում Կազմակերպությունը իրականացրել է «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի ավագ դպրոցի շենքի կառուցում: 2011-2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ոչ նյութական ակտիվների և հիմնական միջոցների մի մասը արտացոլված է եղել անավարտ ոչ ընթացիկ ակտիվների խմբում՝ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 153,840 հազար դրամի հիմնական միջոցներ և 45,826 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ, 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 48,158 հազար դրամի հիմնական միջոցներ և 32,545 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ: Միևնույն ժամանակ հիմնական միջոցների մի մասը ներառված է եղել պաշարներում, որը նույնպես վերդասակարգվել է:

Բ. Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար տրված կանխավճարները ներառված են եղել ընթացիկ տրված կանխավճարների խմբում և վերադասակարգվել են կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար:

Գ. Տրված կանխավճարներ

2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Այբ» կրթական հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվատվության տրված կանխավճարներ հոդվածում չէին արտացոլվել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին տրված կանխավճարների մնացորդները:

Դ. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվատվության դրամական միջոցներ հոդվածում ներառվել էին բանկային կարճաժամկետ ավանդի գումարը՝ 2011թ-ին 2,699 հազար դրամ, և ՎԷՄ ԱՄՆ-ի բանկային հաշվի գումարները, որոնք հավաքագրվել են հօգուտ Այբ կրթական հիմնադրամի՝ 2011թ-ին 11,913 հազար դրամ, 2012թ-ին 7,339 հազար դրամ: Սույն ֆինանսական հաշվետվություններում այդ միջոցները վերադասակարգվել են համապատասխանաբար տրված փոխառություններին և առևտրային և այլ դեբիտորական պարտքերին: 2011թ-ին 998 հազար դրամի շեղում է եղել դրամական միջոցներում, որը առաջացել է սխալ արտարժութային փոխարժեք կիրառելուց: Նման շեղում է եղել նաև 2012թ-ին 336 հազար դրամի չափով:

Ե. Չբաշխված շահույթ

2011թ.-ին նախորդ տարվա չբաշխված շահույթը վերագրվել է եկամուտներին վերաբերող շնորհներին:

Զ. Ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհներ

Ակտիվների և եկամուտներին վերաբերող շնորհների մնացորդները ճշտվել են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և անավարտ ոչ ընթացիկ ակտիվների մնացորդների ճշտմանը համապատասխան:

Է. Ստացված փոխառություններ

2011-2012թթ-ի ֆինանսական հաշվետվություններում ստացված փոխառությունների հաշվեգրված տոկոսների ճշգրտում:

Ը. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, պահուստներ

2011-2012թթ.-ին «Այբ» կրթական հիմնադրամի Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում չեն արտացոլվել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի նկատմամբ գոյացած կրեդիտորական պարտքը:

2011-2012թթ.-ի աշխատակիցներին չօգտագործված արձակուրդների գծով պարտավորությունները ներկայացված են եղել Պահուստներ խմբում, որտեղից վերադասակարգվել են Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր խումբ:

Նախորդ տարիների սխալների և համեմատական տվյալների ճշգրտման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ

հազ. դրամ	Ծնթգ.	Մինչև վերաներկայացումը	Ճշգրտման ազդեցություն	Այլ կրթական հանգույցի համախմբում	Համախմբման ազդեցություն	Վերաներկայացումից հետո
Հիմնական միջոցներ	Ա	9,461	48,158	349	-	57,968
Ոչ նյութական ակտիվներ	Ա	442	32,545	118	-	33,105
Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ	Ա	654,314	(97,999)	-	-	556,315
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	Բ	-	10,884	-	-	10,884
Պաշարներ	Ա	11,279	690	120	-	12,089
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	Դ	1,140	11,913	25,103	(22,885)	15,271
Տրված կանխավճարներ	Գ	20,059	4,296	20	(15,400)	8,975
Տրված փոխառություններ	Դ	-	2,699	-	-	2,699
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Դ	95,792	(15,609)	4,029	-	84,212
Չբաշխված շահույթ	Ե	1,665	(1,665)	-	-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	Զ	608,384	(72,322)	467	-	536,529
Եկամուտներին վերաբերող շնորհներ	Զ	41,452	49,049	2,231	-	92,732
Ստացված փոխառություններ	Է	99,821	43	11,641	-	99,864
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Ը	34,807	30,187	27,041	(38,285)	53,750
Պահուստներ	Ը	7,716	(7,716)	349	-	-

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Ծնթգ.	Մինչև վերաներկայացումը	Ճշգրտման ազդեցություն	Այլ կրթական հանգույցի համախմբում	Համախմբման ազդեցություն	Վերաներկայացումից հետո
Հիմնական միջոցներ	Ա	8,115	153,840	706	-	162,661
Ոչ նյութական ակտիվներ	Ա	392	45,826	-	-	46,218
Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ	Ա	1,344,384	(227,358)	-	-	1,117,026
Պաշարներ	Ա	33,817	(12,928)	2,923	-	23,812
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	Դ	334	7,339	59,875	(51,386)	16,162
Տրված կանխավճարներ	Գ	13,466	29,751	68	(29,519)	13,766
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Դ	25,347	(7,675)	6,650		24,322
Չբաշխված շահույթ	Ե	1,665	(1,665)	-	-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	Զ	1,195,680	(70,229)	706	-	1,126,157
Եկամուտներին վերաբերող շնորհներ	Զ	58,211	6,929	18,656	-	83,796
Ստացված փոխառություններ	Է	108,966	1,919	-	-	110,885
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Ը	102,501	66,066	50,860	(80,905)	138,522
Պահուստներ	Ը	14,225	(14,225)	-	-	-

Կազմակերպությունը իր համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և սեփական կապիտալում շարժի մասին հաշվետվությունը վերաներկայացրել է հաշվի առնելով վերոնշյալ ճշգրտումների ազդեցությունը: Կազմակերպությունը իր համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը ըստ գործառույթի ներկայացման փոխարեն ներկայացնում է ծախսերը վերլուծելով ըստ բնույթի:

Կազմակերպությունը իր 2012թ. ֆինանսական հաշվետվություններում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն չէր ներկայացվել:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Որոշ համադրելի գումարներ վերադասակարգվել են ընթացիկ տարվա ներկայացումներին համապատասխանելու նպատակով:

(ա) Համախմբման հիմքը

(i) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող կազմակերպություններն են: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում վերահսկողության սահմանման ամսաթվից և դադարում են ներառվելուց վերահսկողությունը կորցնելու ամսաթվից: Դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ըստ անհրաժեշտության փոփոխվում է, որպեսզի համընկնի Խմբի կողմից ընդունվածների հետ:

(ii) Համախմբման ժամանակ բացառվող հաշվապահական գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ներխմբային մնացորդները և գործարքները, և դրանցից առաջացող ցանկացած չիրացված եկամուտ կամ ծախս բացառվում են:

(բ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրված փոխառությունները:

Խումբը առևտրային դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները սկզբնապես ճանաչում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Խումբը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներին է դասում տրված փոխառություններ և դեբիտորական պարտքերը:

Տրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Տրված փոխառություններ և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Նման ակտիվների սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով, որին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո տրված փոխառություններ և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Տրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասակարգը ներառում է ակտիվների հետևյալ դասերը՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերը (ծանոթագրություն 16), տրված փոխառությունները (ծանոթագրություն 17) և դրամական միջոցները և դրանց համարժեքները (ծանոթագրություն 18):

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները, ցպահանջ ավանդները և բարձր իրացվելիությամբ ներդրումները՝ ձեռքբերման ամսաթվից երեք ամիս կամ պակաս ժամկետայնությամբ, որոնք ենթակա չեն իրական արժեքի փոփոխության էական ռիսկի:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Խումբը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

(դ) **Հիմնական միջոցներ**

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, ինչպես նաև տեղանքի վերականգնման ծախսերը: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց օգտագործման համար մատչելի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի գծով, որն ակտիվի ինքնարժեքն է կամ այլ փոխարինող գումար՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար:

- Մեքենա-սարքավորումներ 5-10 տարի
- Տրանսպորտային միջոցներ 5-10 տարի
- Տնտեսական գույք 1-5 տարի
- Համակարգչային տեխնիկա 1-5 տարի
- Գրքեր 1-5 տարի
- Այլ հիմնական միջոցներ 1-5 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

(ե) **Ոչ նյութական ակտիվներ**

(i) Ճանաչում և չափում

Խմբի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են ոչ նյութական ակտիվի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

(iii) Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- Արտոնագրված գրքերի թարգմանություն 1-10 տարի
- Լիցենզիաներ և հեղինակային իրավունքներ 1-10 տարի

(զ) **Պաշարներ**

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է առաջին մուտքը առաջին ելք (ԾԻԾՈ) սկզբունքով և ներառում է ձեքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Խմբին հետ վերադարձման, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման հետ:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(է) **Արժեզրկում**

(i) Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերը) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Խմբին վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայում, որը Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը: Ի լրումն, բաժնային

արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում իրական արժեքի էական կամ երկարաձգված նվազումը ձեռքբերման արժեքից:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբը առևտրային դեբիտորական պարտքերի համար դիտարկում է արժեզրկման վկայությունը անհատական և խմբային հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասը ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ դեբիտորական պարտքերի դիմաց պահուստային հաշվում: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորներից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Խմբի կորպորատիվ ակտիվները չեն առաջացնում դրամական միջոցների առանձին ներհոսքեր և օգտագործվում են մեկից ավելի դրամաստեղծ միավորի կողմից: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական հիմունքով և ստուգվում են արժեզրկման տեսանկյունից որպես այն դրամաստեղծ միավորի արժեզրկման ստուգման մաս, որին բաշխվում են:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով 2ճանաչված արժեզրկումից կորուստները բաշխվում են՝ նպատակ ունենալով նվազեցնելու դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտնող այլ ակտիվների հաշվեկշռային արժեքները համամասնական հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ը) **Աշխատակազմի գծով ծախսեր**

Խումբը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները չափվում է չզեղչված հիմունքով և ծախսագրում է, երբ համապատասխան ծառայությունը ստացվում է:

Պարտավորություն է ճանաչվում աշխատակիցներին վճարման ենթական այն գումարների մասով, որոնց համար աշխատակցի կողմից մատուցված ծառայության դիմաց Խումբը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել:

(թ) **Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(ժ) **Հասույթ**

(i) Վաճառված ապրանքներ

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերն ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

(ii) Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում փաստացի մատուցված ծառայությունները հաճախորդի կողմից ընդունման պահին կամ գործարքի ավարտվածության աստիճանի համամասնությամբ:

(ի) **Շնորհներ**

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները և որ շնորհները ստացվելու են:

(i) Ակտիվներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնց հիմնական պայմանն է, որ Խումբը պետք է գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են

որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով և սիստեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին զուգընթաց:

(ii) Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք փոխհատուցում են Խմբի կատարած ծախսումների համար, ճանաչվում են շահույթում կամ վնասում, որպես այլ եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Խումբը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

Կենսաբանական ակտիվին վերաբերող ոչ պայմանական շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

(լ) Գործառնական վարձակալության ծախսեր

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ վարձակալության ժամանակահատվածի ընթացքում:

(խ) Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Խումբը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ հարկերի, տուգանքների, ուշացված վճարումների համար տոկոսների գանձման հնարավորությունը: Խումբը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Խմբին փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային

պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է գնահատականը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

(ծ) Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Խումբը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (հրապարակված 2010թ.), ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* (հրապարակված 2009թ.)

  ՖՀՄՍ 9-ը (2009թ.) ներկայացնում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր պահանջները: Ըստ ՖՀՄՍ 9-ի (2009թ.), ֆինանսական ակտիվները դասակարգվում և չափվում են հիմք ընդունելով այն բիզնես մոդելը, որում դրանք պահվում են և դրանց պայմանագրային դրամական հոսքերը: ՖՀՄՍ 9-ը (2010թ.) ներկայացնում է ֆինանսական պարտավորություններին վերաբերող լրացումները: Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդն (ՀՀՄՍԽ) այժմ ծրագիր է իրականացնում, որն ուղղված է ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջներում սահմանափակ փոփոխություններ կատարելուն և ֆինանսական ակտիվների արժեզրկման ու հեջի հաշվառման վերաբերյալ նոր պահանջներ ավելացնելուն:

  ՖՀՄՍ 9-ը (հրապարակված 2010թ. և 2009թ.) ուժի մեջ է մտնելու 2015թ. հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Ակնկալվում է, որ ՖՀՄՍ 9-ի (2010թ.) ընդունումը Խմբի կողմից ազդեցություն կունենա ֆինանսական ակտիվների վրա, սակայն չի ազդի ֆինանսական պարտավորությունների վրա:

4 Իրական արժեքի որոշում

Խմբի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

(բ) Ոչ ածանցյալ գործիքներ

Ոչ ածանցյալ գործիքների իրական արժեքը, որը որոշվում է բացահայտման նպատակների համար, հաշվարկվում է հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

5 Հասույթ

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված
Այբ ավագ դպրոցի ուսումնական ծրագիր	151,095	88,801
Դիլիջանի դպրոցի ստեղծման ծրագիր	56,408	-
Մրցույթների կազմակերպումից՝		
Կենգուրու և Ռուսական արջուկ	46,530	43,207
Այբ տարրական դպրոցի ուսումնական ծրագիր	29,640	-
Ամառային ճամբար	7,115	-
Այլ դասընթացների կազմակերպումից հասույթ	6,078	9,789
Ապրանքների իրացումից	409	271
	297,275	**142,068**

6 Այլ եկամուտներ

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված
Եկամուտներին վերաբերող շնորհներից	331,842	368,251
Ակտիվներին վերաբերող շնորհներից	37,266	20,428
Այլ եկամուտներ	3,261	338
	372,369	**389,017**

7 Աշխատակազմի գծով ծախսեր

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված
Աշխատավարձ	378,831	255,736
Հատկացումներ պետական կենսաթոշակային հիմնադրամին	-	25,408
	378,831	**281,145**

2013 թվականի ընթացքում հաշվարկված ընդհանուր աշխատավարձից 3,567 հազար դրամ (2012թ.՝ 15,301 հազար դրամ) աշխատավարձ կապիտալացվել է:

Տարվա ընթացքում Խմբի աշխատողների միջին քանակը կազմել է 145 աշխատող (2012թ.՝ 102 աշխատող):

8 Այլ ծախսեր

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված
Դրամաշնորհային ծրագրերի ծախսեր՝ որից	157,072	185,485
Այլ կրթական հանգույց՝	131,875	138,294
Այլ կրթական հանգույցի համար կատարված ծախսեր	33,908	52,431
Այլ կրթական հանգույցի կողմից կատարված ծախսեր, այդ թվում՝	97,967	85,863
Տրանսպորտային ծախսեր	*37,711*	*29,147*
Սննդի կազմակերպման ծախսեր	*13,723*	*16,647*
Պահպանության և անվտանգության ծախսեր	*8,400*	*8,400*
Ուսումնական պրոցեսի կազմակերպման ծախսեր	*8,244*	*3,501*
Խորհրդատվական և գրասենյակային ծախսեր	*5,167*	*3,876*
Գործուղման և վերապատրաստման ծախսեր	*4,009*	*3,110*
Ռոբոտիկայի ծախսեր	*3,617*	*27*
Ճամբարային ծախսեր	*3,118*	-
Լողի դասընթացի ծախսեր	*1,753*	*2,832*
Կապի և հեռահաղորդակցության ծախսեր	*1,308*	*3,281*
Վերանորոգումներ	*682*	*20*
Այգու պահպանում	*307*	*227*
Գովազդային ծախսեր	*166*	*1,023*
Այլ	*9,762*	*13,772*
Առարկայական մրցույթի կազմակերպում	13,163	12,448
Կրթաթոշակներ	7,164	32,019
Գերազանցության կենտրոն	3,850	-
Մելքոնյան կրթական հաստատության վերածնունդ	-	1,050
Այլ դրամաշնորհային ծախսեր	1,020	1,674
Այլ հիմնադրամի վարչական ծախսեր	15,293	15,696
Կոնվերտացիայի ծախսեր	1,304	1,994
	16,597	**17,690**
	173,669	**203,175**

9 Ֆինանսական եկամուտ/(ծախսեր)

հազ. դրամ	**2013թ.**	**2012թ. վերաներկայացված**
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Տոկոսային եկամուտ բանկային ավանդների գծով	1,452	702
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	-	87
Ֆինանսական եկմուտ	**1,452**	**789**
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	(4,564)	(5,953)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(495)	-
Ֆինանսական ծախսեր	**(5,059)**	**(5,953)**
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	**(3,607)**	**(5,164)**

10 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Խումբը շահութահարկը վճարում է 20% դրույքով (2012թ.՝ 20%):

հազ. դրամ	2013թ.	2012թ վերաներկայացված
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	5,289	-
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(3,704)	(1,302)
	1,585	(1,302)

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2013թ.		2012թ. վերաներկայացված	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	31,590	100%	(1,302)	100%
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	6,318	20%	(260)	20%
Զուտ չհարկվող եկամուտ	(4,733)	-15%	(1,042)	80%
	1,585	5%	(1,302)	100%

11 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Գրքեր	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Առ 1 հունվարի 2012թ.*	2,623	17,341	-	19,947	13,707	11,978	65,596
Ավելացումներ	-	41,760	6,518	32,272	12,331	32,095	124,976
Առ 31 դեկտեմբերի 2012թ. *	2,623	59,101	6,518	52,219	26,038	44,073	190,572
Ավելացումներ	4,451	21,379	17,817	41,556	12,383	3,642	101,228
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	7,074	80,480	24,334	93,775	38,420	47,716	291,799
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ							
Առ 1 հունվարի 2012թ.*	402	586	-	1,884	4,491	264	7,629
Մաշվածության ծախս	607	7,134	1,086	4,204	4,132	3,118	20,282
Առ 31 դեկտեմբերի 2012թ.*	1,009	7,721	1,086	6,089	8,623	3,382	27,911
Մաշվածության ծախս	877	11,809	1,433	11,476	4,757	6,714	37,066
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	1,886	19,530	2,519	17,565	13,380	10,096	64,976
Հաշվեկշռային արժեք							
Առ 1 հունվարի 2012թ.,*	2,221	16,755	-	18,063	9,215	11,714	57,967
Առ 31 դեկտեմբերի 2012թ.*	1,614	51,380	5,431	46,131	17,414	40,691	162,661
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	5,187	60,951	21,815	76,210	25,040	37,620	226,823

* - վերաներկայացված

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6,959 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրո հաշվեկշռային արժեքով (2012թ.՝ 6,598 հազար դրամ):

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չուներ գրավադրված հիմնական միջոցներ:

(ա) Օգտակար ծառայության ժամկետների վերանայում

2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Խումբը իրականացրել է գործառնական արդյունավետության վերանայում, որի արդյունքում անփոփոխ են մնացել հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները:

12 Ոչ նյութական ակտիվներ

հազ.դրամ	Արտոնագրված գրքերի թարգմանություն	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 1 հունվարի 2012թ.*	32,487	629	33,116
Ավելացումներ	12,318	940	13,258
Առ 31 դեկտեմբերի 2012թ. *	44,805	1,569	46,374
Ավելացումներ	5,127	251	5,378
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	49,932	1,820	51,752
Ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ			
Առ 1 հունվարի 2012թ.*	-	11	11
Ամորտիզացիա	-	145	145
Առ 31 դեկտեմբերի 2012թ.*	-	156	156
Ամորտիզացիա	-	200	200
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	-	356	356
Հաշվեկշռային արժեք			
Առ 1 հունվարի 2012թ.,*	32,487	618	33,105
Առ 31 դեկտեմբերի 2012թ.*	44,805	1,413	46,218
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	49,932	1,464	51,396

* - վերաներկայացված

13 Անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ

հազ.դրամ	**Ընդամենը**
Մնացորդը 2012թ. հունվարի 1-ին, վերաներկայացված	**556,316**
Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով կատարված ծախսումներ	560,711
Մանցորդը 2012թ. դեկտեմբերի 31-ին, վերակերկայացված	**1,117,027**
Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով կատարված ծախսումներ	152,944
Մնացորդը 2013 թ. դեկտեմբերի 31-ին	**1,269,971**

2010-2013թթ-ի ընթացքում Խումբը իրականացրել է «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի ավագ դպրոցի կառուցում: 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում անավարտ ոչ ընթացիկ ակտիվները արտացոլված չեն եղել, անավարտ շինարարության վրա կատարված ծախսերը ամբողջությամբ ծախսագրվել էին 2012թ-ի ընթացքում:

14 Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվի մնացորդը ներառում է Մասաչուսեթսի Տեխնոլոգիայի Ինստիտուտին տրված կանխավճարը, որը կազմում է 58,408 հազ. դրամ կամ 143,996 ԱՄՆ դոլար: Կանխավճարը տրվել է Մասաչուսեթսի Տեխնոլոգիայի Ինստիտուտին «Ֆաբ Լաբ» ծրագրի իրականացման համար սարքավորումների գնման, առաքման, տեղակայման նպատակով:

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվի մնացորդը ներառում է Կետ Քոնսթրաքշն շինարարական ընկերությանը տրված կանխավճարը, որը կազմում է 18,900 հազ. դրամ: Կանխավճարը տրվել է Կետ Քոնսթրաքշն շինարարական ընկերությանը՝ ՀՀ. ք Երևան, Արաբկիր համայնքի Թբիլիսյան

11/11 հասցեում գտնվող շինության՝ Բ շենքի հարդարման աշխատանքների իրականացման նպատակով:

15 Պաշարներ

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Ապրանքներ	1,252	13,699	-
Նյութեր	7,275	6,807	11,434
Արագամաշ առարկաներ	1,204	3,306	656
	9,731	**23,812**	**12,089**

16 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	**2013թ.**	**2012թ. վերաներկայացված**	**1 հունվարի 2012թ. վերաներկայացված**
Առևտրային դեբտորական պարտքեր	11,834	7,465	2,218
Այլ դեբիտորական պարտքեր	3,707	8,187	13,053
	15,541	**15,652**	**15,271**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	(7,169)	-	-
Զուտ դեբիտորական պարտքեր	8,372	15,652	15,271
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեի	700	510	-
	9,072	**16,162**	**15,271**

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված Խմբի ենթարկվածությունը պարտքային ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

17 Տրված փոխառություններ

հազ. դրամ	**2013թ.**	**2012թ. վերաներկայացված**	**1 հունվարի 2012թ. վերաներկայացված**
Ընթացիկ			
Կարճաժամկետ բանկային ավանդ	2,945	-	2,699
Չապահովված փոխառություններ կապակցված կողմերին	21,000	-	-
	23,945	**-**	**2,699**

Կապակցված կողմերին չապահովված փոխառությունները տրվել են անտոկոս:

Ընթացիկ փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Խմբի շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

18 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Դրամարկղ	130	130	130
Բանկային հաշիվներ	77,618	24,192	84,082
	77,748	24,322	84,212

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

19 Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

(ա) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
հազ. դրամ	**2013թ.**	**2012թ.***	**2013թ.**	**2012թ.***	**2013թ.**	**2012թ.***
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,434	-	-	-	1,434	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,116	2,845	-	-	5,116	2,845
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**6,549**	**2,845**	**-**	**-**	**6,549**	**2,845**

(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազ. դրամ	**1 հունվարի 2013թ.***	**Եկամտում ճանաչված**	**31 դեկտեմբերի 2013թ.**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	1,434	1,434
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,845	2,270	5,115
	2,845	**3,704**	**6,549**

հազ. դրամ	**1 հունվարի 2012թ.***	**Եկամտում ճանաչված***	**31 դեկտեմբերի 2012թ.***
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,543	1,302	2,845
	1,543	**1,302**	**2,845**

* - վերաներկայացված

20 Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	**2013թ.**	**2012թ. վերաներկայացված**	**1 հունվարի 2012թ. վերաներկայացված**
Տարեսկզբի դրությամբ	**1,126,157**	**536,529**	
Շնորհների ստացում՝ որից	**335,516**	**610,055**	
Դրամական միջոցներ	335,516	588,055	
Կրեդիտորական պարտքերի զիջումից	-	22,001	
	1,461,673	**1,146,585**	
Շնորհների օգտագործում՝ որից	**(37,266)**	**(20,428)**	
Շնորհից եկամտի ճանաչում	(37,266)	(20,428)	
Տարեվերջի դրությամբ	**1,424,407**	**1,126,157**	**536,529**

21 Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Տարեսկզբի դրությամբ	83,796	92,732	
Շնորհների ստացում՝ որից	333,906	361,235	
Դրամական միջոցներ	333,906	287,071	
Փոխառության զիջումից	-	44,854	
Կրեդիտորական պարտի զիջումից	-	29,310	
	417,702	453,967	
Շնորհների օգտագործում՝ որից	(337,336)	(370,171)	
Շնորհի հետ վերադարձ	-	(1,919)	
Շնորհից եկամտի ճանաչում	(331,842)	(368,252)	
Աշակերտների կրթաթոշակի ֆոնդի հավելաճ	(5,494)	-	
Տարեվերջի դրությամբ	80,366	83,796	92,732

22 Վարկեր և փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Խմբի ամորտիզացված արժեքով չափվող վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի և արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ վերաներկայացված
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային վարկային գիծ	-	-	40
Կապակցված կողմերից ստացված գրավով չապահովված կարճաժամկետ փոխառություններ	67,001	110,885	99,825
	67,001	110,885	99,865

(ա) Պայմաններ և մարման ժամկետներ

Կապակցված կողմերից ստացված գրավով չապահովված փոխառություններն արտահայտված են արտարժույթով և ունեն 7.5% տոկոսադրույք: Դրանց մարման ժամկետայնության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 24(գ)-ում:

23 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերներկայացված	1 հունվարի 2012թ. վերներկայացված
Առևտրային կրեդիտորական պարտքեր	73,177	99,302	32,222
Ստացված կանխավճարներ	49,799	16,482	6,769
Պարտավորություններ աշխատակիցներին	210	47	258
Պարտավորություններ աշխատակիցներին չօգտագործված արձակուրդների գծով	25,578	14,225	7,716
Պարտավորություններ բյուջեին	18,351	6,794	4,962
Այլ կրեդիտորական պարտքեր	526	-	150
Գործառնական վարձակալության գծով	1,673	1,673	1,673
	169,314	138,523	53,750

24 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- արտարժույթի ռիսկ
- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

(բ) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկին Խմբի ենթարկվածությունը կապված է դրամից տարբեր արժույթներով՝ ԱՄՆ դոլարով և Եվրոյով արտահայտված արտարժութային բանկային հաշվի հետ:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ արտարժույթով արտահայտված հետևյալ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները.

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտա-հայտված 2013թ.	Եվրոյով արտա-հայտված 2013թ.	Ռուսական ռուբլով արտա-հայտված 2013թ.	ԱՄՆ դոլարով արտա-հայտված 2012թ.*	Եվրոյով արտա-հայտված 2012թ.*	Ռուսական ռուբլով արտա-հայտված 2012թ.*
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	580	-	-	7,345	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,639	2,661	8,461	8,681	2,492	7
Ստացված փոխառություններ	(67,001)	-	-	(110,885)	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(3)	-	(1,198)	-	-	(1,034)
Զուտ ենթարկվածություն	**(37,785)**	**2,661**	**7,263**	**(94,859)**	**2,492**	**(1,027)**

*-վերաներկայացված

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

ՀՀ դրամով	Միջին դրույք		Սփոթ դրույքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2013թ.	2012թ.	2013թ.	2012թ.
1 ԱՄՆ դոլար	409.63	401.76	405.64	403.58
1 Եվրո	544.12	516.38	559.54	532.24
1 Ռուսական ռուբլի	12.87	12.94	12.44	13.27

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրապնդումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Խումբը դիտարկում է որպես խելամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2012թ. համար, ինչպես ներկայացված է ստորև:

հազ. դրամ	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
2013թ.		
ՀՀ դրամի 10% արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ	(3,779)	(3,779)
ՀՀ դրամի 10% արժեզրկում Եվրոյի նկատմամբ	266	266
ՀՀ դրամի 10% արժեզրկում Ռուսական ռուբլու նկատմամբ	726	726
2012թ.		
ՀՀ դրամի 10% արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ	(9,486)	(9,486)
ՀՀ դրամի 10% արժեզրկում Եվրոյի նկատմամբ	249	249
ՀՀ դրամի 10% արժեզրկում Ռուսական ռուբլու նկատմամբ	(102)	(102)

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի թուլացումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով:

(i) Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև հաճախորդների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ հաճախորդների արդյունաբերության ու երկրների կողմից հանձն առնված պարտավորությունների չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, մասնավորապես, ներկայիս ոչ բարենպաստ տնտեսական պայմաններում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար Խումբը գրավ չի պահանջում:

(ii) Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք		
	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8,373	15,651	15,270
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	77,825	24,322	84,212
	86,199	39,974	99,482

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք		
	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Տեղական	7,793	8,306	2,218
Արտասահմանյան	580	7,345	13,053
	8,373	15,651	15,270

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք		
	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Իրավաբանական անձինք և կազմակերպություններ	650	7,438	13,052
Ֆիզիկական անձինք	7,723	8,213	2,218
	8,373	15,651	15,270

Խմբի ամենամեծ հաճախորդը մի ֆիզիկական անձ է, որի դեբիտորական պարտքը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,800 հազար դրամ (2012 դեկտեմբերի 31-ին՝ 800 հազար դրամ, 2011թ.-ի դեկտեմբերի 31-ին՝ 750 հազար դրամ):

Արժեզրկումից կորուստներ

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը:

հազ. դրամ	Համա խառն 2013թ.	Արժեզրկված 2013թ.	Համա խառն 2012թ.*	Արժեզրկված 2012թ.*	Համա խառն 1 հունվարի 2012թ.*	Արժեզրկված 1 հունվարի 2012թ.*
Ոչ ժամկետանց	3,708	-	9,589	-	13,208	-
Ժամկետանց 0-30 օր	5,893	(1,754)	5,088	-	2,063	-
Ժամկետանց 31-120 օր	2,222	(1,766)	-	-	-	-
Ժամկետանց 121 օրից ավել	3,720	(3,649)	974	-	-	-
	15,542	(7,169)	15,651	-	15,270	-

*-վերաներկայացված

Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի շարժը տարվա ընթացքում հետևյալն է.

հազ. դրամ	2013թ.	2012թ. վերաներկայացված	1 հունվարի 2012թ. վերաներկայացված
Մնացորդը տարվա սկզբին	-	-	-
Աճը տարվա ընթացքում	7,169	-	-
Հակադարձումից նվազեցում	-	-	-
Մնացորդը տարվա վերջին	7,169	-	-

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2013թ. հազ. դրամ	Հաշվեկշռային գումար	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	169,315	169,315	124,266	45,049
Կապակցված կողմերից ստացված գրավով չապահովված փոխառություններ	67,001	67,752	67,752	-
Գրավով չապահովված բանկային վարկեր	77	77	77	-
	236,393	**237,143**	**192,094**	**45,049**

2012թ. հազ. դրամ	Հաշվեկշռային գումար	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	0-6 ամիս	6-12 ամիս
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	138,523	138,523	94,977	43,546
Կապակցված կողմերից ստացված գրավով չապահովված փոխառություններ	110,885	111,632	111,632	-
	249,408	**250,154**	**206,609**	**43,546**

(ե) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Խմբի գործունեության բնույթից ելնելով նշված ռիսկերից որևէ մեկին Խումբը ենթարկված չէ:

(զ) Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքի որոշման հիմունքները ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

25 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբը չունի ամբողջական ապահովագրություն իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Խմբի ղեկավարությունը տեղյակ չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Խումբը այլ անձանց դեմ հարուցված դատական հայցեր չունի:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի: Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(դ) Շրջակա միջավայրի պաշտպանություն

Խմբի ղեկավարության կարծիքով Խումբը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին և վստահ է, որ Խումբը չունի շրջակա միջավայրի պահպանության հետ կապված պարտավորությունների ծագման էական ռիսկեր:

Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը համեմատաբար նոր է, և օրենսդրության մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա պարտավորությունների ծագման համար:

26 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է իր հիմնադիրների և հոգաբարձուների կողմից (տե՛ս ծանոթագրություն 1(բ)):

(բ) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսերի «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում (տե՛ս ծանոթագրություն 7):

հազ. դրամ	2013թ.	2012թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ՝ ներառյալ հատկացումներ պետական կենսաթոշակային հիմնադրամին	60,135	56,175
	60,135	**56,175**

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Խմբի գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

(i) Ծախսեր

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2013թ.	Գործարքի արժեքը 2012թ.	Մնացորդը 2013թ.	Մնացորդը 2012թ.
Ծառայությունների ձեռքբերում՝				
Կապակցված կողմերից	38,648	52,453	13,008	11,295
	38,648	**52,453**	**13,008**	**11,295**

Խումբը վարձակալական պայմանագրերով գրասենյակային տարածք և գույք է վարձակալել իր կապակցված կողմից:

(ii) Շնորհներ

Խումբը իր կապակցված կողմերից շնորհներ է ստանում կանոնադրական նպատակների իրականացման նպատակով:

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2013թ.	Գործարքի արժեքը 2012թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներ՝		
Կապակցված կողմերից	85,874	204,771
Եկամուտներին վերաբերող շնորհներ՝		
Կապակցված կողմերից	26,215	16,561
	112,089	**221,332**

2013թ. և 2012թ. ընթացքում Խումբը դրամական տեսքով ստացված շնորհներն օգտագործել է ծանոթագրություն 8-ում ներկայացված ծրագրերի իրականացման, աշխատակազմի գծով ծախսերի վճարման, այլ ծախսերի, ինչպես նաև հիմնական միջոցների ձեռք բերման համար:

(iii) Վարկեր և փոխառություններ

հազ. դրամ	Ստացված փոխառություններ 2013թ.	Ստացված փոխառություններ 2012թ.	Մնացորդը 2013թ.	Մնացորդը 2012թ.
Ստացված փոխառություններ				
Կապակցված կողմերից	-	110,117	67,071	110,885
Տրված փոխառություններ				
Կապակցված կողմերին	-	-	21,000	-
	-	110,117	88,001	110,885

Կապակցված կողմերից ստացված փոխառություններն տրամադրվում են տարեկան 7.5% տոկոսադրույքով, որը մոտ է շուկայական պայմաններին և մարվելու են 2014-2015 թվականներին:

(դ) Գնային քաղաքականություն

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները տեղի են ունեցել ոչ շուկայական գներով և պայմաններով:

27 Էական դուստր կազմակերպություններ

«Այբ» կրթական հիմնադրամը 2011թ. հունիսի 22-ին ստեղծել է «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը և ստեղծման պահից ամբողջությամբ վերահսկում է իր դուստր կազմակերպությունը: